ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4568-Ա « 17 » սեպտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի Հ.4779-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՔԻՆ ՉԱՐԲԱԽԻ Հ.66, ՆԵՐՔԻՆ ՉԱՐԲԱԽԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.16 ԵՎ ՆԵՐՔԻՆ ՉԱՐԲԱԽԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ.28 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել Գագիկ Ադևոսյանի լ/ա Մանուշակ Ավետյանի դիմումը Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 20-ի հ. 4779-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու, Ն. Չարբախ հ.66, Ն. Չարբախ 3-րդ փողոց հ.16 և Ն. Չարբախ 3-րդ փողոց 2-րդ նրբանցք հ.28 հասցեների հողամասերի սահմանները ճշտելու մասին, հողի սեփականության իրավունքի 10.04.1996թ. հ.Ա 047195 պետական ակտը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 28.10.2022թ. հ.23811 և 19.10.2022թ. հ.21735 վկայագրերը, ՀՀ կադաստրի կոմիտեի 29.06.2026թ.-ի հ.ԱՏ-29062026-01-1362 տեղեկանքը (Ն. Չարբախ հ.66), ՀՀ կադաստրի կոմիտեի 18.07.2025թ. հ.ԱՏ-18072025-01-0622 տեղեկանքը:

Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 20-ի «Երևան քաղաքի Ներքին Չարբախի 3-րդ փողոցի հ.16 և 3-րդ փողոցի 2-րդ նրբանցքի հ.28 հասցեներում գտնվող տնամերձ, ինչպես նաև գյուղատնտեսական նպատակով հատկացված հողամասերի հողհատկացման հիմքերը վերականգնելու և 600.0քմ մակերեսով տնամերձ հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ Սարիբեկ Ադևոսյանի սեփականության իրավունքը ձևակերպելու մասին» հ.4779-Ա որոշմամբ վերականգնվել են Սարիբեկ Ադևոսյանի սեփականության իրավունքները նշված հողամասերի նկատմամբ, սակայն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցում չի կատարվել:

Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 28.10.2022թ. հ.23811 և 19.10.2022թ. հ.21735 վկայագրերով Սարիբեկ Ադևոսյանի գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում Գագիկ Սարիբեկի Ադևոսյանը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Ն. Չարբախ հ.66 հասցեի /ծածկագիր՝ 01-011-0249-0018/ հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 5297.85քմ, փաստաթղթերում ամրագրված 5300.0 քմ մակերեսի փոխարեն, Ն. Չարբախ 3-րդ փողոց հ.16 հասցեի /ծածկագիր՝ 01-011-0150-0008/ հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 600.0քմ, իսկ Ն. Չարբախ 3-րդ փողոց 2-րդ նրբանցք հ.28 հասցեի /ծածկագիր՝ 01-011-0166-0022/ հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 400.0քմ, որոնք համապատասխանում են փաստաթղթերում ամրագրված հողամասերի համապատասխանաբար 600.0քմ և 400.0քմ մակերեսների հետ:

ՀՀ կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի Ն. Չարբախ 3-րդ փողոց հ.16 և Ն. Չարբախ 3-րդ փողոց 2-րդ նրբանցք հ.28 հասցեների հողամասերը գտնվում են 10-րդ գոտում, իսկ Ն. Չարբախ հ.66 հասցեի հողամասը՝ 11-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածով, 40-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1.1 կետով, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 19.10.2022թ. հ.21735 և 28.10.2022թ. հ.23811 վկայագրերը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դիրքորոշումը, աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Ն/48828-26 եզրակացությունը.

1. Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 20-ի «Երևան քաղաքի Ներքին Չարբախի 3-րդ փողոցի հ.16 և 3-րդ փողոցի 2-րդ նրբանցքի հ.28 հասցեներում գտնվող տնամերձ, ինչպես նաև գյուղատնտեսական նպատակով հատկացված հողամասերի հողհատկացման հիմքերը վերականգնելու և 600.0քմ մակերեսով տնամերձ հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ Սարիբեկ Ադևոսյանի սեփականության իրավունքը ձևակերպելու մասին» հ.4779-Ա որոշումը:

2. Սահմանել, որ Ն. Չարբախ հ.66 /վարելահող՝ ծածկագիր՝ 01-011-0249-0018/, Ն.Չարբախ 3-րդ փողոց հ.16 /տնամերձ՝ ծածկագիր՝ 01-011-0150-0008/ և Ն.Չարբախ 3-րդ փողոց 2-րդ նրբանցք հ.28 /տնամերձ՝ ծածկագիր՝ 01-011-0166-0022/ հասցեներում գտնվող հողամասերի սահմանները որոշվում են համապատասխանաբար՝ 5297.85քմ, 600.0քմ և 400.0քմ մակերեսներով հողամասերի համար սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ